ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2020 թվականի N 117-Ա

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի N478-Ա որոշման 3-րդ կետի պահանջը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. «ՀՀ Սյունիքի մարզ, համայնք Գորիս, գյուղ Խնձորեսկ, Հին Խնձորեսկ գյուղատեղի թաղամաս թիվ 1, 2, 9, 10, 11, 12, 13» հասցեում գտնվող, «Գյուղատեղի «Խնձորեսկ» (միջնադար-20-րդ դդ.)» պատմամշակութային հուշարձանի պահպանական գոտու զբաղեցրած 122.7979 հեկտար մակերեսով հողատարածքը (գույքը) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը հանձնելու նպատակով ստեղծել գույքի հանձնման հանձնաժողով հետևյալ կազմով՝

Մուշեղ Կոստանդյան	- մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ (նախագահ),
Արմեն Մարտիրոսյան	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ,
Ավետիք Ավտիսյան	- ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալի օգնական:

2. Հանձնաժողովին՝ մինչև ս/թ հունիսի 10-ը ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը և ներկայացնել տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

05.05 2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. մայիսի 5
ք. Կապան